մեանս։ Քանզի Եղիա Եպիսկոպոս՝ որ Փոխանորդ էր Աթոռոյն, պատճառ եղեւ մեծաւ մասամբ ապստամբութեան քաղաքացի այլազգեաց և տիրելոյ ամբոցին, և 'ի գուշակել իւրում թէ՝ գան հասանեն զօրք 'ի Տէրութենէ 'ի վերայ քաղաքին, ելից երկիւղիւ զսիրտ Կարապետ Եպիսկոպոսի և խորհրդական գրագիր Յակոբ վարդապետի և առաքեաց զնոսա 'ի Բեթղեհէմ (Հոկտեմբեր) որպէս գրեցաք 'ի վեր, և ինքն սկսաւ մարտնչիլ ընդ Լուսարար Մկրտիչ Եպիսկոպոսի, կամ բանալ զդանձարան Եկեղեցւոյն և տալ ինքեան որ ինչ 'ի նմա ոսկի և արծաթ, զի տացէ պահանջողաց, և կամ ելեալ գնասցեն 'ի Բեթղեհէմ ապաստանիլ անդ ընդ ապստամբ գիւղականս, ապա թէ ոչ՝ մատնեմ ասէ զքեզ յայտնապէս պարտատէրց և բռնաւորաց, թէ 'ի ձեռս սորա են բազմագումար դանձք ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ զորս թագուցեալ ոչ տայ։ Անճարացեալ Մերուանոյն յակամայ կամն ընկերացաւ նմա և գնացին 'ի Բեթղեհէմ. Զմիւռնացի Յարութիւն վարդապետն թաքեաւ 'ի վանս Յունաց ամիսս Զ. Զանդրցի Թարգման Յակոբ, Արեւելցի Գէորգ, Երկար Կարապետ, Բարդուղիմէոս և Միքայէլ վարդապետք փախեան 'ի Ռէմլէ և 'ի Յոպպէ, զորոց գրէր Եղիա առ ազգայինս Կոստանդինուպօլսոյ իբր սատակս և արտաքսեալս 'ի վանաց, և մնացեալքն անօրինակ անկարգութեամբ վարէին՝ լեալ աւուրն մէն մի իշխող հասարակաց։

Քաղաքապետն որ նոր հասեալ էր յԵրուսաղէմ 'ի Կոստանդինուպօլսոյ՝ գրեաց հրամանագիր եւ առաքեաց 'ի ձեռն սպասաւորին իւրոյ առ Փոխանորդն Եղիա՝ զի եկեսցէ յԱթոռն, և նորա առեալ զգիրն պատառեաց առաջի գրաբերին, և բազում հայհոյութեամբ դարձոյց զնա յետս. դարձեալ գրեաց առ նա Դպրապետ դատարանի, զի եկեսցէ՝ ապա թէ ոչ՝ 'ի վախճանի չարագոյն եւս լինի. իսկ նա նոյն օրինակ անարգութեամբ դարձոյց զսպասաւոր նորին։ Ի վերայ այսորիկ ժողովեալ պարտատէրց դիմեցին 'ի դատարան, և իւրաքանչիւր ոք բողոք բարձեալ գոչէր՝ թէ միաբանք Հայոց առին զայսքան դրամս մեր, այժմ գԸլխաւորք նոցին փախուցեալ են 'ի քաղաքէս և զտոկոսիս դրամոց մերոց ոչ հատուցանեն, կամ առեալ 'ի նոցանէ